1925-ին Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Ե Կաթողիկոս գնահատելով Գրիգորիս Մ. Վարդապետի արժանիքը գիրքը Եպիսկոպոս կը ձեռնադրէր եւ Եւրոպայի հայոց Հայրապետական Պատուիրակ կը նշանակէր: Իր այդ հանգամանքով Պալաքեան Եպիսկոպոս կը շրջէր Լոնտոն, Պրիւքսէլ, Ժընեւ, Միլան, Լիոն եւ Մարսիլիա: Մարսիլիոյ մէջ Հարաւային Ֆրանսայի Առաջնորդ կ'ընտրուէր ուր նաեւ կը հաստատէր իր գործունէութեան կեդրոնը, իսկ միեւնոյն ատեն Փարիզի մէջ կը մնար Վոսաճապուհ Եպիսկոպոս Քիպարեան յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Առաջնորդ Մարսիլիոյ Թեմին Ս. Թարգմանչաց Մայր Եկեղեցին

Մարսիլիա հասնելով Պալաքեան Սրբազան 1927 Մայիսին իր նախագահութեամբ պազամաւորական ժողով գումարել կու տար, երբ մինչ այդ տեղւոյն հոգեւոր կարիքները կը հոգար Երուսաղէմէն Մամբրէ վարդապետ Գալֆայեան, որ ժողովի վերջին նիստին իր հրաժարականը կը ներկայացնէր Ամերիկայի թեմէն հրաւեր ստացած ըլլալուն հետեւանքով: Յետագային Մամբրէ Եպիսկոպոս Գալֆայեան կ'ընտրուէր Ամերիկայի զոյգ թեմերէն որպէս թեմակալ Առաջնորդ:

Առաջնորդի իր պաշտօնին մէջ Պալաքեան Սրբազան յաջողութիւններ կ'արձանագրէր, մեծագոյնը տեղւոյն Սրբոց Թարգմանչաց նորաշէն եկեղեցին ըլլալով, թէեւ փոթորկալից ճնշումներու տակ: Յաջողեցաւ զայն իրագործել շնորհիւ բարերար ասպետ Վահան Խորասանեանի որ Պրիւքսէլ կը բնակէր: Թարգմանչաց տօնին երբ Պալաքեան Սրբազան Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցոյ մէջ կը քարոզէր, հոն ներկայ էր նաեւ Խորասանեան որ տպաւորուելով Սրբազանին քարոզին կը

խոստանար իր տրամադրութեան տակ մեծագումար նուիրատուութիւն մը յատկացնել իր նախասիրած եկեղեցաշէն նպատակի իրագործման համար:

Բարերար եւ Առաջնորդ կը համաձայնին Մարսիլիոյ մէջ մայր եկեղեցի մը կառուցանել հայկական հարազատ ոճով որուն լրիւ ծախքը կը յատկացնէր բարերար Խորասանեան: Քաղաքի յայտնի Փրատօ պողոտայի հողամասը կը գնէին եւ եկեղեցոյ հիմնարկէքը կը կատարէին 1928 փետրուար 18-ին: Ճարտարապետ Արամ Թահթաճեան Ս. Էջմիածնի տաճարի հետեւողութեամբ կը պատրաստէր նախագիծը՝ արտաքին քանդակներով եւ ներքին սիւնազարդ կամարներով: 1931 հոկտեմբեր 24-25ին նորաշէն եկեղեցոյ օծումը Առաջնորդը ինք կը կատարէր յանուն Սրբոց Թարգմանչաց, պաշտօնական անձերու եւ հոծ բազմութեան ներկայութեան, Կոմիտաս վարդապետի սան վարդան Սարգսեանի ղեկավարած երգչախումբի մասնակցութեամբ եւ երգեցողութեամբ Արմենակ Շահմուրատեանի:

Ներքին Խլրտումներ

Եկեղեցին ու կալուածը սակայն մնացին միշտ բարեար վահան Խորասանեանի անունին գրուած որպէս բացարձակ կալուածատէր, բանալին իր ձեռքին: Այս կացութիւնը անշուշտ կաշկանդեց Առաջնորդ Սրբազանի գործունէութիւնը եւ շատ կարճ ժամանակ ետք հեռացաւ իր ձեռքով օժած եկեղեցիէն, մանաւանդ Յունիս 23-ի դժբախտ դէպքին հետեւանքով, երբ Սրբազանը Թարգմանչաց տօնին իր մատուցած պատարագի

ընթացքին կը քարոզէր: Խուժան մը քահանայի մը գլխաւորութեամբ անպատկառ կերպով «վա՛ր իջիր» կը պոռար, ըսելու համար որ իրենց եկեղեցին աճուրդի կը դրուէր ու Սրբազանը նորաշէն եկեղեցոյ մէջ հանգիստ կը քարոզէր: Մանրամասնութիւններ կան այդ եւ յաջորդ դէպքերու մասին Ստեփան Սարկաւազ Պողոսեանի Մարսիլիա գաղութին յատուկ համապարփակ գիրքին մէջ, ուր գրուած է թէ խնդրոյ առարկայ եկեղեցին Սէն Լուիի եկեղեցին էր որ աճուրդի հանուելու վտանգին տակ էր եւ Սրբազանը, ի պատիւ իրեն, այլալուծ խորանէն իջնելով նոյն օրն իսկ «աղաներէն» դրամ հաւաքելով արգելք եղած է աճուրդին: Սակայն Պալաքեան Սրբազան այդ օրուրէն մինչեւ վերջ մայր եկեղեցիէն ներս ոտք չէ դրած ու առաջնորդարանը փոխադրած է Պոմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:

Ներքին այդ շփոթ կացութիւնը պատճառ դարձած է մայր եկեղեցոյ ութ ամիս փակ մնալուն, յատկապէս երբ բարերարին միջոցաւ «Կրօնական Ընկերակցութիւն» մը կազմուած է որուն յանձնուած է եկեղեցոյ գործունէութիւնը, ամբողջական կալուածը մնալով միշտ Խորասանեանի անանական սեփականութիւնը: Եկեղեցին վերաբացուած է 1933 փետրուար 19-ին եւ պաշտօնական յայտարարութեան մէջ գրուած է թէ այդ թուականէն սկսեալ պաշտամունք տեղի կ'ունենայ «կանոնաւորաբար Առաջնորդ Սրբազան Զօր կողմէ»: Սակայն Գրիգորիս Եպիս-

Շար.ը էջ 19



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Շատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատաշարկով՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք անսխալ մասնաշաղկապներու ծառայութիւններ յարմար գիններով

Մանրամասնութեան համար դիմել՝

ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor


200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemania@sci-us.com



Հայագգի Յայտնի Մեկեմաս Միքայէլ Արամեանցի Կեանքից

(Շարունակուած նախորդ թիւէն)

Եղիսաբէթը չէր սիրում Բաքուն: Նա այս քաղաքը գաւառական ու մեկուսացած ծայրամաս էր համարում եւ անդադար համոզում ամուսնուն վերադառնալ Թիֆլիս, ինչը նրան ի վերջոյ յաջողուում է: Բաքում վաճառելով ունեցուածքն ու գործարանները՝ Միքայէլը վերադառնում է Թիֆլիս, սակայն սրանից ներքնտանեկան լարուածութիւնը չի վերանում: Արամեանցի կնոջ սիրավէպերի մասին էր խօսում ու ծաղրուծանակի էր ենթարկում ողջ քաղաքը: Արամեանցը կնոջ դաւաճանութեանը երկար ժամանակ չէր հաւատում, կարծում էր, թէ այս լուրերը տարածում էին հակառակորդները, բայց մի օր պատահաբար նրա ձեռքն է ընկնում Եղիսաբէթի սիրային նամակները, ինչը վերջին կաթիլն է դառնում, եւ ամուսինները բաժանուում են:



Ժողովուրդը անուանում էր «Միխայիլի հիւանդանոց»: Հիւանդանոցը լի էր հիւանդներով, որտեղ քաղաքաբնակները նորմալ բուժօգնութիւն ստանալու հնարաւորութիւն չուներ: 1903 թուականին Արդուտեանին ուղղուած Արամեանցի նամակում ասուում է նոր հիւանդանոց կառուցելու իր ծրագրի մասին: «Պատիւ ունեմ տեղեկացնել Ձերդ գերագանցութեանը, որ հիւանդանոցի կառուցման համար 100 հազար ռուբլի կը նուիրաբերեմ»: Սրա դիմաց Միքայէլը պահանջում է, որպէսզի հիւանդանոցն իր անունը կրի: Հիւանդանոցը,

Եղիսաբէթից յետոյ Արամեանցը մտերմանում է Թիֆլիսի յայտնի գեղեցկուհի՝ Եւգենիա Շիխեանցի հետ, որի հետ չնայած պաշտօնապէս չեն ամուսնանում, սակայն ամենուր ներկայացնում է նրան որպէս իր կին: Սիրեցեակի համար Միքայէլը քաղաքի կենտրոնում՝ Օլգիի փողոցում եռալարկ



Թիֆլիսի «Մաժեստիկ» հիւրանոցը

տուն է կառուցում, որի բակում Փարիզում պատուիրուած եղջերուի բրոնզէ արձան է կանգնեցնում: Յաւոք գործարարի բախտը Եւգենիայի հարցում եւս չբերեց, կարճ ժամանակ անց Շիխեանցը սիրեկանի հետ լքում է Թիֆլիսը: Արամեանցը վերջնականապէս հաստատուում է Թիֆլիսում՝ Չանքերը ներդնելով շինարարութեան ոլորտում, ինչը ե՛ւ բարեգործութիւն էր, ե՛ւ եկամտի աղբիւր:

ցը, որի համար Յարական Ռուսաստանում նախադէպը չունեցող եւրոպական ռենտգեն սարք է պատուիրուում, իր աւարտուն տեսքն ստացաւ արդէն 1910-ին: Արամեանցի հիւանդանոցում բուժում ստանալը անվճար էր, իսկ բժիշկների աշխատավարձերը վճարում էր ինքը՝ Արամեանցը:

Սակայն վերադառնանք մեր պատմութեան սկզբին՝ Արամեանցի առեւանգման պատմութեանը: Ակնյայտ է, որ Առաջին Համաշխարհային պատերազմը եւ դրա արդիւնքում աշխարհում տիրող խառնաշփոթ իրավիճակը իրենց բացասական ազդեցութիւնն ունէին առեւտրի վրայ, ինչից գերծ չմնաց նաեւ Արամեանցը: Այսուհանդերձ, միլիոնների կարողութիւն ունեցող Միքայէլի կենցաղի վրայ ստեղծուած իրավիճակը առանձնապէս չէր անդրադարձել: Գործարարին առեւանգողների հաշուարկներով Արամեանցը մեծ կորուստ չէր կրելու, եթէ նրա միլիոններից մի քանի հազարը պահպանէր: Յատկապէս հաշուի առնելով, որ փող տալու փորձ Արամեանցը նախկինում ունեցել էր: Դեռեւս 1907-ին, յանցա-



Թիֆլիսի Արամեանց հիւանդանոցը

գործները առեւանգել էին նրա որդուն՝ Սողոմոնին: Արամեանցը նրան վերադարձնելու համար վճարել էր 100 հազար ռուբլի, ինչն այն ժամանակուայ համար մեծ գումար էր համարուում:

Առեւանգումից յետոյ, քաղաքի ոստիկանութիւնը Արամեանցին ազատ արձակելու համար միջոցներ է ձեռնարկում: Արագ կերպով հնարաւոր է դառնում յայտնաբերել եւ ձերբակալել աւտոմեքենայի վարորդին, որի ցուցմունքներից պարզ է դառնում, որ առեւանգողները Արամեանցին տարել են Կովկասի գերեզմանատան ուղղութեամբ: Յանցագործներին յայտնաբերելու նպատակով, ոստիկանութիւնը Թբիլիսիի գիշերային ժամերին մի քանի կասկածելի անձ է ձերբակալում: Այսուհանդերձ, թերթերը չեն գրում, թէ ի՞նչ հանգամանքներում է յաջողուում ազատել Արամեանցին, միայն պարզ է եղել, որ յանցագործները առեւտրականին առեւանգելուց մէկ օր անց բաց են թողել նրան: Հէնց նոյն օրը, Թիֆլիսի քրէական ոստիկանութեան ղեկավար Փաշուլիան անձամբ է հարցաքննում Արամեանցին, սակայն նրանից որեւէ արժէքաւոր տեղեկութիւն չի ստանում: Արամեանցը ասում էր, որ առեւանգողներին չի ճանաչում, նրանց արտաքինը չի յիշում: Տպաւորութիւնն այն էր, որ Արամեանցին վախեցրել են, ինչի պատճառով նա չի ցանկացել բացայայտել յանցագործների ինքնութիւնը: Չնայած գործի շուրջ առկա տեղեկութիւնների սակաւ լինելուն, ոստիկանութիւնը շարունակում է որոնողական աշխատանքները, ինչի արդիւնքում՝ ձերբակալում են Արամեանցին առեւանգողները: Հե-

տագային բացայայտում է յանցախմբի ղեկավար ինքնութիւնը, ով ոստիկանութեան հետ բախման հետեւանքով սպանուում է:

Արամեանցի կեանքի վերջին տարիները անցել են չքաւորութեան մէջ: Վրաստանի պետութիւնը նրանից խլեց տներն ու հիւրանոցները: Գոլովինի պողոտայում գտնուող մեծ շէնքում դեռ 1918-ին, Գերմանիա-Կովկաս առեւտրային բանկ էր բացել, որը մէկ տարի անց յանձնել էին արձմիութեանը:

Արամեանցին մնաց միայն Սերգիի 4 համարում գտնուող տունը: 1921-ին, խորհրդային իշխանութիւնները Արամեանցին դուրս հանեցին նաեւ Սերգիի փողոցից: Միքայէլին իր սեփական տանը մնաց միայն մի փոքր նկուղ, որտեղ ապրում էր երեխաների հետ: Ասում են, որ նրան յաճախ տեսնում էին «Մաժեստիկ» հիւրանոցի մօտ, որի կառուցման համար նա միլիոններ էր ծախսել: Նա ափսոսանքով նայում էր հիւանդի շինութեանը, շոյում պատերը:

Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի, առեւտրականների բարձրագոյն խորհրդի անդամ Միքայէլ Արամեանցը, որի կարողութիւնը միլիոններ էր հասնում, 1924 թուականին մահացաւ աղքատութեան ու սովի մէջ: Արամեանցի յուղարկաւորութեանը շատ թիֆլիսեցիներ էին մասնակցում: Նրան յուղարկաւորեցին սեւ ձիերով եւ սպիտակ ձիակառքով: Արամեանցը վերջին հանգրուանը գտաւ Խոջիվանքի հայկական պանթէոնում: Տարիներ անց կոմունիստական իշխանութիւնները հայկական գերեզմանատան տեղում մեծ զբօսայգի կառուցեցին. Արամեանցի գերեզմանն ընդմիշտ կորաւ:

Նոր Հրատարակութիւն

Շարունակուած էջ 7-էն

Հայոց էլոհիմն էր եւ այլ նիւթեր: «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին Մէջ» գիրքը պիտի ներկայացնէ՝ վերապատուելի Սերոբ Մկրտիչեան, Աւագ Հովիւ՝ Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի, Փասատինա: Այժմէա-

կան եւ խիստ կարեւոր գիրքի ներկայացումը տեղի պիտի ունենայ՝ Ուրբաթ 20 Սեպտեմբեր 2019, երեկոյեան ժամը 7:30-ին, Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի Տէրեան սրահին մէջ, Փասատինա:

Հասցէ: 339 S. Santa Anita Ave. Pasadena, Ca. 91107

Հայաստանի Սէջ Առաջին

Շարունակուած էջ 13-էն

այսօր Աւետիսեան դպրոցի մէջ ուսանիլը պատիւ կը համարուի: Աւետիսեանի շրջանաւարտներն զիմաց փակ դռներ չկան, եւ դպրոցի աշակերտութեան քանակն ընդամէնը քանի մը տարուայ ընթացքին հնգապատկուեցաւ, ինչ-

պէս կ'ըսեն՝ կրթահամալիրի «դաւար տանիքի սիգամարզը» կը գրաւէ մարդոց:

Աւետիսեան դպրոցը սոսկ կրթարան չէ: Ան մեծ, համերաշխ, հայաշունչ ընտանիք է, որ ստանձնած է հայրենաշինութեան եւ հայրենիքի բարեկարգման գործի իր բաժինը:

«Պատմական Հայկական Վաշտը» (Հեղինակ՝ Ալեքսեյ Կոլմակով)

ԱԽԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ


Բարեբախտաբար Ջորավար Անդրանիկի մասին կայ առատ գրականություն: Հետաքրքրուող մը հեշտութեամբ կրնայ գտնել իր նախասիրութեան եւ ճաշակին յարմար Անդրանիկի նուիրուած հատոր մը: Անոնք ըլլան պատմագիտական, գեղարուեստական կամ յուշագրական բնոյթի, կու գան կարեւոր մասնիկ մը աւելցնելու առասպելական հերոսին շքեղ տիպարին վրայ, կու գան առաւել գեղազարդելու հերոսականութիւնը անոր:

Աչքի առաջ ունենալով Անդրանիկ Փաշայի կեանքին ռազմական ուղին, անոր ունեցած հեղինակութիւնն ու իր շուրջ ստեղծուած ոգեւորիչ հետաքրքրութիւնը, ինքնաբերաբար ականատեսներու պատուամենքն ու անոր գործակիցներուն յուշագրութիւնները կը դառնան կենդանի վկայութիւններ Ջորավարին անհատականութիւնը ընդգծող: Այդ շարքին կը պատկանին Լեւոն Լիւիշեանի, Արմէն Սիւնիի, Երուանդ Փափագեանի, Աւետիս Ահարոնեանի, Վարդգէս Ահարոնեանի, Եղիշէ Քաջունիի, Վահան Թոթովեցիի, Վազգէն Անդրէասեանի, Լեւոն Թիւթիւնեանի հայթայթած հիւթեղ նիւթերն ու յուշերը:

Վերջերս լոյս տեսաւ նմանատիպ յուշագրութիւն մը ռուս գիտնորական Ալեքսեյ Կոլմակովի գրիչով: Անոր վերնագիրն է՝ «Պատմական Հայկական Վաշտը. Անդրանիկի վերջին Ջորամասի Սիպիրեան Վաշտը»: Հեղինակը եղած է պորուչիկ (ցարական Ռուսաստանի շրջանի գիտնորական կոչում), Ջոր. Անդրանիկի հետ մասնակցած է 1918-19 թուականներու մարտերուն, զանգեզուրեան մարտնչումներուն, հասած է մինչեւ Զուլֆա, անձամբ շփուած եւ խոր հիացում ունեցած է Ջոր. Անդրանիկի հանդէպ: Ի հարկէ, յուշերն ու տպաւորութիւնները գրած է ռուսերէն, զորս 1989-ին թարգմանած եւ հրատարակած է լրագրող Ռուբէն Սիմոնեանը (լոյս տեսած «Հրագրան» թերթին մէջ):

Նոր հրատարակութեան ռուսերէնէ թարգմանիչն է գրականագէտ, անդրանիկապաշտ, Երեւանի Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի տնօրէն Կարօ Վարդանեան: Ան գրած է նաեւ գիրքին յառաջաբանը՝ «Անդրանիկ. Անեկրորդ Հերոս եւ Ջորավար» խորագրով: Գիրքը հրատարակուած է Յովսէփի եւ Գարոլին Նալպանտեան մատենաշարով (թիւ 36): Կը բաղկանայ 96 էջէ: Խմբագիրն է Արմէն Աւանէսեան: Լոյս տեսած է «Արմաւ» հրատարակչատունէն, Երեւան, 2018-ին:

Հետաքրքրական է իմանալ, թէ ինչպէ՛ս ռուս գրականը յայտնուած է Անդրանիկի վերջին գորաբաժինէն ներս եւ անմնացորդ նուիրուած անոր եւ Հայաստանին՝ մինչեւ վերջ: Ան Առաջին Աշխարհամարտին թրծուած էր Արեւմտեան ճակատին եւ այս սիպիրեան մարտերուն մէջ: 1917-ին, իր քուլթուրի մէջ (Սիպիրիա), ռուսական քաղաքացիական պատերազմին, իր գործած դերը կ'ունենար օսմանեան բանակի գերեզմարուած 210 թրքահայ գիտնորներէ կազմուած վաշտը: Հայ ռազմիկներու գրական եւ վճռական գործողու-



թիւնները, որուն ականատեսն էր Կոլմակով, կը նպաստեն, որ ան համակրի հայոց: Եւ երբ վաշտը կ'որոշէ վերադառնալ Հայաստան, մասնակցիլ հոն տեղի ունեցող ռազմական գործողութեանց, վրէժխնդիր ըլլալ թրքական վայրագութեանց, անոր կը միանան կապի-

տան Եակով Բորտ, Պորիս Վենկերցով եւ բանաստեղծ Պիոտր Սիպիրցեւ: Կոլմակով եւս կ'ուղեկցի վաշտին: Իսկ վաշտը պատմութեան եւ գրականութեան էջերուն կ'արձանագրուի «սիպիրեան վաշտ» անունով: Վաշտը 1918-ին Հայաստան ժամանելով, անմիջապէս կը միանայ Ջորավար Անդրանիկի գորամասին, որ աւելի ուշ պիտի մղէր իր վերջին մարտերը Լոռիէն ու Զաւարէն մինչեւ Սիւնիք, Զուլֆա, Նախիջեւան, Զանգեզուր եւ Արցախի մօտակայ շրջաններ:


Գիրքի յառաջաբանին մէջ Կ. Վարդանեան կ'անդրադառնայ Ջոր. Անդրանիկի ռազմական, քաղաքական եւ հայրենասիրական եզակի բարեմասնութիւններուն, գրելով՝ «մենք երկրորդ Անդրանիկ չունեցանք: Նրանից առաջ էլ այդպիսին չենք ունեցել»: Ապա՝ «Ոչ մի հերոս, իրական թէ երեւակայական, համեմատելի չէ Անդրանիկի հետ: Իր հմայքով ու կատարելութեամբ Անդրանիկին, թերեւս, փոքր-ինչ մօտենում է միայն... Սասունցի Դաւիթը»: Ան դժգոհ է մերօրեայ անտարբերութենէն. «Անչափ ցաւալի է, որ Ջորավարի գործի ու յիշատակի հանդէպ խարդաւանքն այսօր էլ շարունակուած է՝ մոլորութեան մէջ զցելով պատ-

մութեան անհաղորդ նոր սերնդին եւ մեզ հեռացնելով մեր մեծագոյն հերոսից»: Ա. Կոլմակովի մասին՝ «Տեսաւ Ջորավարի հայրական գուրգուրանքը բզբտուած ժողովրդի բեկորներէ հանդէպ: Եւ իր մեծ հոգու բոլոր լարերով, որդիական սիրով ու մեծարանքով կապուեց Ջորավարին: Հրաշքով ողջ մնաց Կոլմակովը: Ողջ մնաց, որպէսզի մեզ համար գրի առնի մեր եւ իր Ջորավարի վերջին արշաւանքի պատմութիւնը»:

Արդարեւ, յուշագրութեան հեղինակը հայկական վաշտին հետ Սիպիրիայէն կ'ուղղուի Կովկաս, Տուրքսէ, Թիֆլիս եւ 1918 Ապրիլ 10-ին Ալեքսանդրապոլի մէջ հանդերձաւորուելով կ'անցնի Ախալքալաք՝ սկսելու իր հայկական ողիսականը:

Ա. Կոլմակով ունի ուշագրաւ մտորումներ. օրինակ՝ ռուսական բանակին Արեւմտահայաստանէն անսպասելի եւ պախարակելի հեռացման առթիւ. «առաջին անգամ յստակօրէն ըմբռնեցի ռուսական բոլշեւիզմի ողջ յանցաւորութիւնը, որն ամբողջ Կովկասեան ճակատից հանել էր ռուսական բանակը եւ Ռուսաստանին նուիրուած այդ ազ-

Շար.Պ էջ 19



San Fernando Valley Line:
Metro Red Line (802) to Civic Center/Grand Park Station

City's/MTA Stations:
North Hollywood Station, Universal/Studio City Station, Hollywood/Highland Station, Hollywood/Vine Station, Hollywood/Western Station, Vermont/Sunset Station, Vermont/Santa Monica Station, Vermont/Beverly Station, Wilshire/Vermont Station

San Gabriel Valley Line:
Metro Gold Line (804) to Union Station-Metro Gold Line then take Metro Purple Line (805) to Civic Center/Grand Park Station

City's/MTA Stations:
APU/Citrus College Station, Azusa Downtown Station, Irwindale Station, Duarte/City of Hope Station, Monrovia Station, Arcadia Station, Sierra Madre Villa Station, Allen Station, Lake Station, Memorial Park Station

PARKING LOTS

THE MUSIC CENTER Parking Fee \$5
135 N Grand Ave. Los Angeles CA 90012

WALT DISNEY CONCERT HALL Parking Fee \$5
111 S. Grand Ave. Los Angeles, CA 90012

CATHEDRAL OF OUR LADY OF THE ANGELES Parking Fee \$10
555 W Temple St. Los Angeles CA 90012

Auto Park 26 Parking Fee \$9
120 Olive St. (1st and Olive) Los Angeles CA 90012

BUS PICK UP LOCATIONS


BURBANK
St. Leon Armenian Cathedral
3325 N. Glenoaks Blvd. Burbank, CA 91504

GLENDALE
St. Gregory Armenian Catholic Church
1510 E Mountain St, Glendale, CA 91207
St. Mary's Armenian Church
500 S Central Ave, Glendale, CA 91204
Glendale Community College Main Parking Structure Lot B
1838 E Mountain St Glendale, CA 91206

PASADENA
Saint Gregory Armenian Church of Pasadena
2215 E Colorado Blvd, Pasadena, CA 91107
Pasadena Jivelekian Armenian Center
2242 E Foothill Blvd Pasadena, CA 91107
AGBU Vatche and Tamar Manoukian High School
2495 E Mountain St, Pasadena, CA 91104

HOLLYWOOD
St. Garabed Church
1614 N Alexandria Ave, Los Angeles, CA 90027

STUDIO CITY
United Armenian Congregational Church
3480 Cahuenga Blvd W, Los Angeles, CA 90068



NORTH HOLLYWOOD
Armenian Apostolic Church of N. Hollywood
13050 Vanowen St. North Hollywood, CA. 91606

VAN NUYS
Saint Peter Armenian Church
17231 Sherman Way, Van Nuys, CA 91406

ENCINO
Holy Martyrs Armenian Church
5300 White Oak Ave, Encino, CA 91316


NORTH HILLS
Holy Martyrs ARS Pilavjian/Cabayian School
16617 Parthenia St. North Hills, CA 91343

CANOGA PARK
AGBU Manoogian-Demirdjian School
6844 Oakdale Ave, Canoga Park, CA 91306

TUJUNGA-LA CRESCENTA
The Great Caesar Banquet Hall
6723 Foothill Blvd, Tujunga, CA 91042
Western Prelacy
6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214

MONTEBELLO
Holy Cross Armenian Cathedral
900 Lincoln Ave., Montebello, CA 90640

Հանրակառքեր/Ավտոբուսներ Մեկնում են Ժամը 1:00-ին Buses Leave at 1:00pm



Փոխադրամիջոց Ապահովել եւ Հաւելեալ տեղեկութիւն
Bus reservations and more info: 888-924-1915

Արտաշէս Թագաւորի Զարսանիքը

Մենք զարմանալիօրէն կենսութիւն ժողովուրդ եմք եւ ես անկասկածելիօրէն Յաւատում եմ դրան: Ոչ մէկի բարբարոսութիւնը կամ Բռնութիւնը չեն կարող մարել Զայ ազգի՝ յաւերժ լոյսին ձգտող հօր ոգին

Յովհաննէս Թումանեան

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուած նախորդ թիւէն)

Քրմուհիները, Սաթենիկ թագուհուն իրենց թեւերի վրայ պահած գալիս մեհեանի հրապարակ: Արտաշատ ոստանի մարդիկ բարձր կանչերով ողջոյնում թագուհուն, Արմինա-Հայաստան լեռների լանջերի հագար գոյնի բրաբրոն ծաղիկներ նետում Սաթենիկ թագուհու գլխավերեւ, որը ապշահար նայում թէ ինչպէ՞ս էր ծխածանի անձրեւ մարդում իր թագին: Հարսանեաց հանդէսի խրախճանք էր, փանդիւնների դողացող լարերի, թմբուկների գարկերի անուշ մեղեդիներ հնչում, քրմուհիները Սաթենիկ թագուհուն թեւանցուկ արած շուրջ պարի շարքեր բերում: Յորեանի արտերում չովիկների յառնած հասկերի դողի նման քրմուհիներն էին հագար նագանքով պար բռնել, Սաթենիկ թագուհին հոլա-նի թեւերն էր երկինք յարել, արեւից ճառագայթներ փրցնում՝ նետում չորս բոլորը: Արտաշատի մի կտրիճ պարման, պարի հարթակ դուրս գալիս՝ սկուտեղին լիքը մարգարիտ, այն բուռ-բուռ նետում Սաթենիկի թագին՝

«Տեղում էր մարգարիտ»

Սաթենիկի հարսնութեան հանդեսին»:

Թմբկահարները պինդ գարկում են թմբուկները, փողերն են յաղթական պարեր հնչում, քուրմերը Արտաշէս թագաւորին թեւանցուկ արած գալիս հրապարակ: Արտաշէսը գնում պինդ գրկում Սաթենիկին, հագար համբոյր շարում լուսնեակ երեսին: Թուրն է պարզում արեւին, նրանից ելած շողերը ցանում Սաթենիկի դէմքին: Շարք բռնած քրմական դասի շուրջ պարն է, սոփում են գետինը, նրանց գարկից Ալանաց երկիրն է դողում: Թագաւորը, հատու շարժումներով թուրն է ձօնում դէպի արեւ, նրա կրակից մի պատու փրցնում՝ Սաթենիկի թագուհուն նուիրում: Նորէն Արտաշատի մի քաջ տղայ, ծանր սկուտեղը վեր պահած, մտնում պարի բացատ եւ վեր պահած սկուտեղից բուռերով ոսկի ցանում՝

«Առատ անձրեւի պէս ոսկի էր տեղում»

Արտաշէսի փեսայութեան հանդեսին»:

Մեհեանի հրապարակում, մինչեւ իրիկուն ժողովրդային խրախճանք էր, ամպրոպի պէս պայթում էին գուսանների երգերը, շուրջ պարերի տոփիւնները: Անկախացած հայքերի երկրի թագաւորի հարսանիքն էր, երգում էին աշխարհական մարդիկ, մենապարեր ու իրենց նախնիների շուրջ պարեր բռնում, գինի էր հոսում հրապարակում, սրտի յոյզի, գինու արբեցում էր: Երկար տարիներ հզօրների գերիշխանութեան տակ էին, իրենց Արտաշէս թագաւորը անկախ էր հռչակել Արմինա-Հայաստան երկիրը, հայքերի հողն էր սահմանագատել, մինչեւ այնտեղ՝ որտեղ որ հայերէն բարբառող արեւորդիների գարմից մարդիկ էին: Ամբողջ Արտաշատն էր թագաւորին ու թագուհուն տանում պալատ, եօթ օր, եօթը գիշեր Արտա-

շատում, Արմինա-Հայաստանի շէներում Արտաշէս թագաւորի ու Սաթենիկի հարսանեաց հանդէսի տօնախմբութիւն էր:

Ալանաց օրիորդ՝ Սաթենիկ թագուհին, Արմինա-Հայաստանին ընծայել էր վեց տղաներ՝ Արտաւազդ, Վրոյր, Մաթան, Զարեհ, Տիրան, Տիգրան, որոնց արեւորդի նախնիների ծինների հետ խաչածեռուել էին նաեւ Ալան քաջ ազգի ծինները: Ինչո՞ւ, Ալան ազգի յետնորդներին հիմա չեն չիչեցնում, նրանց նախնիների հետ Արմինա-Հայաստան երկրի խնամակալ բարեկամական կապերը: Հայոց որդիներին, դուստրերին տալիս են հագար օտար անուններ, Արմինահայերի նախնիների ինչքա՞ն սիրուն պատմական անուններ կան, որոնք հպարտութեամբ կը կրէին:

Ես էլ էի այնտեղ, երեւակայութեան ճախրանքով գնացել Արտաշատի Անահիտի մեհեան, մասնակցել Արտաշէս արքայի ամուսնութեան հանդէսի պատարագին: Մեհեանի հրապարակում «Մուսանների լեռ»-ան լանջի շէնի քաջի մենապար բռնել, պիտի տեսնէի՝ քարեւորդիները ինչպիսի՞ խանդաղատանքով ծափ տալիս, իրենք էլ ելել հարթակ՝ ինձ հետ իմ լեռնական մարդկանց պարը նմանակել: Արորդի Արմէն-Հայ, երբ ընթերցես իմ այս գիրը, անէացի՛ր մի պահ, արեւի ճառագայթներին բազմած հասի՛ր Արտաշատի մեհեան, գրկի՛ր անուշ Արտաշէս թագաւորին, խոնարհի՛ր Մայր Անահիտի բազի-նին, դէմքը ցօղի՛ր ատուռանի կրակի լոյսով, արբեցի՛ր քու գարմից արեւորդիների Արմինա-Հայաստանով, մտի՛ր շուրջ պարի շարքեր, խենթացի՛ր սիրով, գինիով, հոգիդ լեցո՛ւր Արմինա-Հայաստանի խինդով, սիրի՛ր երկրիդ հողը, սիրի՛ր քու գարմից արեւորդի ազգակիցներիդ, մի՛ փախնիր այնտեղից, դու նրա տէրն ես, զնա՛ տիրի նրան:

Արտաշէս արքան երկար-երկար տարիներ թագաւորեց Արմինա-Հայաստանում: Ստեղծեց հզօր բանակ, անասան պահեց երկրի սահմանները, նրան միացրեց սահմանային մարզեր, երկիրն ամբողջ Հայերէն էր խօսում, Հայերէն ծիծաղում, Հայերէն տաղեր ու երգեր ասում, Հայերէն աղօթում իրենց աստուածներին: Արտաշէս թագաւորի ատեն երկրում ստեղծուել է նախնիների, իրենց արքաների, երկրի հողի հանդէպ պաշտամունք: Պաշտամունք, այն հասել է մինչեւ «Մուսա Լեռ»-ան շէնի մի Արմին հայի սրտին, որ երկար տարիներ նրանց հանդէպ սիրով լցուած, երգում նրանց իմաստութիւնը, պատարագում նրանց ու իրենց աստուածների յաւերժութիւնը: Հագար-հագար դարերի նախնիների ու նրանց աստուածների լոյսից է վառել իր հոգու տաճարի ջահերը: Ո՞վ դու Արմին-Հայ, հանգրո՞ւքու հոգին խաթարող նոր դարերի լոյսը, զնա՛ երկիր, Աշտիշատի փլած մեհեանների վէմերի լոյսից, Արտաշէսի թոռան-թոռ Մեծն Տիգրան արքայից-արքայի փլած ոստանի որմերի վէմերի լոյսից վառի՛ր հոգուդ ջահերը, տես ինչքա՞ն պիտի հայանաս: Արտաշէսը



Արտաշէս թագաւորի յուղարկաւորութեան խորհրդապատկերը՝ համաձայն խորեմացու նկարագրակահի

բարեփոխեց երկիրը, ստեղծեց առաջաւոր մշակութիւնը Հայաստան: Երկրում անմշակ հող չէր մնացել, երկրում բարգաւաճում, առատութիւն եղեւ: Արմինա-Հայաստանը սիրեց նրան, անուանեց՝ «Անուշ», «Բարի»: Արտաշէս Ա. թագաւոր հայոց:

Հռովմի Անդրիանոս կայսրի խնդրանքով, Արտաշէս թագաւորը գնացել է Պարսկաստան, Մարտք գաւառի Սոհուդ վայրում նրա հետ հանդիպելու: Արտաշէսը Սոհուտում հիւանդանում է: Իր հետ ժամանած Աբեղեան տոհմի Նահապետ Աբեղոյին ճամբում եկեղեցաց գաւառի Երիզա աւանի Մայր Անահիտի մեհեան, նրանից Արտաշէս թագաւորի համար առողջութիւն, կենդանութիւն խնդրելու: Արտաշէսը ցանկացել է, որ հայոց աստուածները իրեն բժշկութիւն ու երկար կեանք պարգեւէին: Նա երազել է նորէն տեսնելու հայոց աշխարհի ծխաններից բարձրացող ծուխը եւ Նաւասարդի առաւօտը՝ Ո՞վ կը տար ինձ ծուխը ծխանի եւ առաւօտը Նաւասարդի, եղնիկների վազքը եւ եղջերուների արշաւը,

Մենք փող ենք փչում եւ թմբուկ զարկում,

Ինչպէս կարգն է թագաւորների: Մինչեւ որ Աբեղոն տոհմի Նահապետը Սոհուտ կը վերադառնար, յանգել էր Արտաշէսի սրտի կրակի ջահը: Նահապետը կազմակերպել է հայոց աշխարհի անուշ թագաւորի յանգած մարմնի փոխադրումը Արտաշատի արքունի պալատ: Սաթենիկը գրկել էր Արտաշէսի յանգած մարմինը, ողբացել ամուսնու մահը, ծով արցունք շողել դէմքին, քնքուշ մատներով շոյել արցունքոտ երեսը: Արտաշէսի որդիները, արքունիքը ողբում էին նրա արեւափառ լոյսի կանթերի մարիլը: Արտաշէսի մարմինը պատում ոսկեհիւս պատմուճանով, գլխին թագ ու կողքին ոսկեայ գէնքեր դնում, հանգչեցնում ոսկեձոյլ դագաղում:

Պատմահայր Մովսէս Խորենացին իր մատեանում գրել է՝ «Պատմի եւ հիւանդանայ նմա (Արտաշէսի) ի Մարանդի, ի Բակուրակերտ աւանի: Ան կ'ըսէ նաեւ, թէ թագաւորը Աբեղո անունով Նահապետը կ'ուղարկէ Եկեղեցաց գաւառ, Երիզա, Արտեմիսի մեհեանը, որպէսզի կուռքերէն բժշկութիւն եւ երկար կեանք խնդրէ: Սակայն, ան դեռ չվերադարձած, Արտաշէս կը մահանայ»: Ապա պատմահայրը ներկայացնում է, թէ ի՞նչպիսի փառաւոր յուղարկաւորութիւն է եղել նրա համար: Խորենացին մէջբերում է Արիստոն պատմիչի վկայութիւնը՝ ասելով, թէ որքան բազմութիւն մեռաւ Արտաշէսի մահունան ժամանակ՝ սիրելի կիները,

հարձերը եւ մտերիմ ծառաները: Ապա կը նկարագրէ թաղման շքեղութիւնը թէ՛ «Դագաղքն էին ոսկեղէնք, գահոյքն եւ անկողինքն բեհեգեայ եւ պատմուճանն որ զմարմնովն՝ ոսկեթել, թագ կապեալ ի գլուխն, եւ գէնն ոսկեղձ առաջ եղեալ, եւ գահոյքն շուրջ՝ որդիքն եւ բազմութիւն ազգականացն եւ առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք եւ Նահապետն եւ նախարարութեանցն գուռք եւ միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատեցին. եւ առաջի պղնձիս հարկանելով փողս եւ գինիսն ձայնարկուկուսանք սեւազգեստք եւ աշխարհով կանայք եւ գհետ՝ բազմութիւն ուսմկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանաւ լինէին կամաւոր մահունք»:

Արտաշատ ոստան, արեւն էր գարթնել, բազմել Արարատի ձիւնոտ գագաթին: Այգ, արեւ աստուած Միհրի առաջին շողերը լոյս էին վառել ոստանի ու նրա այգիների երեսներին: Ոստանի պալատի պատուհաններից ոչ մի լոյս էր ճառագում, մութ էր պալատը:

Ոստանի մեհեանի քրմայետը բարձրաձայն կանչել է, որ յանգել է Արմինա-Հայաստանի Արտաշէս «Անուշ» թագաւորի հոգու ճրագը, հայոց աստուածները նրան տանում են իրենց տաճար: Ոստանի մարդիկ էին խմբուել պալատի ու մեհեանի շուրջ: Ողբում էր ոստանը, որբում էր Արմինա-Հայաստանը: Արտաշատ ոստանի մարդկանց արցունքները եթէ մի տեղ հոսէին՝ գետակ դարձած կը գնային Երասխի ջրերին հոսելու, որ նա էլ իր քայլամուտը երթով ողբաձայն մուշար: Արտաշէսի դագաղը դնում վեց ձիեր տանող կառքին: Փողահարները հնչում էին տխրալից մեղեդիներ, որոնց հնչիւնները հասնում Արարատի գագաթ ելած հայոց աստուածներին, որոնք եկել էին ուղեկցելու Արտաշէս թագաւորի յաւիտենակութեան ճամբայի երթին: Սաթենիկը, իր վեց որդիներով, դանդաղ քայլում դագաղի հետ, գնում թագաւորի դին ամփոփելու Անի ոստանի Դարանաղեաց գաւառի Արամազդի մեհեանին մօտիկ թագաւորների դամբարանում: Զինուորական բարձրաստիճան պաշտօնեաները, Նահապետները, նախարարական գինական գնդերը, պատերազմի գնալու նման հանդիսաւոր տողանցում: Արտաշատ ոստանի ժողովուրդը, աշխարհական բազմահագար մարդիկ, ողբաձայն կանչերով գլխիկոր քայլում:

Արտաշէսի դագաղն էին իջեցնում թագաւորական դամբարան: Պալատական սպասաւորները վշտի

ՄԱՐԶԱԿԱՆ

Ա Սերիա. «Ռոմա»-ն Գոլառատ Խաղում Յաղթեց «Սասուոլո»-ին. Մխիթարեանը Գոլի Չեղինակ

Իտալիայի առաջնութեան 3-րդ տուրում «Ռոմա»-ն գոլառատ խաղում յաղթանակ տօնեց «Սասուոլո»-ի նկատմամբ:

«Գայլեր»-ի կազմում կոլերի հեղինակներ դարձան Կրիստանտեն (12'), Ջեկոն (20'), Մխիթարեանն (22') ու Կլիվերտը (33'):

Յատկանշական է, որ այս խաղում 3 կոլային փոխանցմամբ աչքի ընկաւ հոմալիստների կիսապաշտպան Լորենցո Պելեգրինին:

Հիւրերի կազմում դուբլ ձեւակերպեց Բերարդին (53', 73'):

«Ռոմա»-ն 5 միաւորով 7-րդ հորիզոնականում է, «Սասուոլո»-ն ունի 3 միաւոր ու 13-րդն է:



«Լիվերպուլ»-Ը Անգլիական Ֆուլբոլի Ռեկորդ Է Գրանցել



«Լիվերպուլ»-ը հերթական յաղթանակն է տարել անգլիական Պրեմիեր լիգայում եւ մրցաշարի ռեկորդ է գրանցել:

Յիշեցնենք, որ մերսիսայդցիները սեփական յարկի տակ 3:1 հաշուով առաւելութեան էին հասել «Նիւքասլ»-ի նկատմամբ:

Յուրգեն Կլոպի թիմը դարձել է Անգլիայի թոփ-դիւրիզիոնի պատմութեան առաջին ակումբը, յաղթելով 14 անընդմէջ խաղում եւ նուազագոյնը երկու կոլ խփելով դիմակայութիւններից իւրաքանչիւրում:

«Տոտենհեմը», «Չելսի» եւ «Մանչեսթեր Եունայթեդը» Յաղթանակներ Տոնեցին

ԱՊԼ-ի 5-րդ տուրում ՄՅՈՒ-ն ընդունել էր «Լեսթերին» ու նուազագոյն հաշուով յաղթանակ տարաւ: Հանդիպման միակ կոլը 8-րդ րոպէին հեղինակեց Մարկուս Ռեշֆորդը:

Միաժամանակ ընթացող միւս խաղում «Տոտենհեմը» հիւրընկալել էր «Քրիսթալ Փելասին» ու խոշոր հաշուով յաղթանակ տարաւ: Խաղն աւարտուեց 4-0 հաշուով: Դուբլի հեղինակ դարձաւ Սոն Հին-Մինը, մէկ անգամ աչքի ընկաւ Լամելան: Մրցակցի կազմում ինքնագոլի հեղինակ դարձաւ վան Աանհոլտը:

Միաժամանակ ընթացող 3-րդ խաղում «Չելսին» հիւրընկալուել էր «Վոլվզին» ու 5-2 հաշուով յաղթեց: Լոնտոնեան թիմի կազմում կոլերի հեղինակ դարձաւ Աբրահամը, սակայն կոլերից մէկն ինքնակոլ էր: «Չելսիի» կազմում մի կոլ էր խփեց Տոմորին, իսկ «գայլերի» կազմում աչքի ընկաւ թիմի նորեկ Պատրիկ Կուտրոնեն:

Լա Լիգա.

«Բարսելոնա»-ն Չախջախեց «Վալենսիա»-ին

Լա Լիգայի 4-րդ տուրում մրցաշարի գործող ախոյեան «Բարսելոնա»-ն հիւրընկալեց «Վալենսիա»-ին:

Խաղի արդէն 3-րդ րոպէին «կապտանոնագոյններ»-ի ֆուտպոլիստ Անսու Ֆատին բացեց հաշիւը: 4 րոպէ անց հենց Ֆատիի փոխանցումից յետոյ էլ աչքի ընկաւ Ֆրենկի դէ Յոնգը:

29-րդ րոպէին հիւրերի յարձակուող Կեւին Գամբլոն կրճատեց հաշուի տարբերութիւնը: Առաջին կէսը 2:1 աւարտուեց: Երկրորդ կէսի արդէն 52-րդ րոպէին կատալոնական ակումբի պաշտպան Ժերար Պիկեն դարձաւ կոլի հեղինակ:


60-րդ րոպէին փոխարինման դուբլ եկաւ Լուիս Սուարեսը եւ արդէն մէկ րոպէ անց դարձաւ իր թիմի 4-րդ կոլի հեղինակը: Ուրուգուալցի աչքի ընկաւ նաեւ 82-րդ րոպէին:

«Չղջիկներ»-ի կազմում խաղաւարտին կոլի հեղինակ նաեւ փոխարինման դուբլ եկած Մաքսի Գոմեսը: Դա խաղի եզրափակիչ գնդակն էր:

Այսպիսով «Բարսա»-ն յաղթեց 5:1 հաշուով եւ այժմ 7 միաւորով գրադեցնում է 4-րդ հորիզոնականը: «Վալենսիա»-ն 4 միաւորով 15-րդն է:

Արթուր Ալեքսանեանը Չի Մասնակցել Աշխարհի Առաջնութեան Եզրափակչին

Օլիմպիական խաղերի ոսկէ մեդալակիր, աշխարհի եռակի ու եւրոպայի քառակի չեմպիոն Արթուր Ալեքսանեանը (97 կգ) վնասվածքի պատճառով չի մասնակցել Նուր-Սուլթանում անցկացուող Յունահռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնութեան եզրափակչին, որտեղ պէտք է մրցէր ռուս Սուսա Եվլո-ի հետ:



Գիւմրեցի ըմբշը կիսա-եզրափակիչ գօտեմարտում ստացել էր կողմերի կտրուածք, որի հետեւանքով նա չի կարողացել պայքարել աշխարհի չեմպիոնի կոչման համար:

ԱԱ-2019.- Արամ Վարդանեանն Ու Ստեփան Մարեանեանը՝ Փոխախոյեաններ, Հայկ Մնացականեանը՝ Պրոնգէ Մետալակիր

Ղազախստանի մայրաքաղաք Նուրսուլթանում շարունակուող յունահռոմէական ըմբշամարտի աշխարհի առաջնութիւնում Ռուսաստանի համար առաջին ոսկէ մետալը նուաճեց 72 կգ քաշային Աբուլյազիդ Մանցիբովը, որը քառորդ եզրափակչում 4:0 հաշուով յաղթել էր Հայաստանի ներկայացուցիչ Մալխաս Ամոնեանին:

Եզրափակչում Մանցիբովը գօտեմարտեց Ուզբեկստանը ներկայացնող Արամ Վարդանեանի հետ եւ յաղթեց 9:0 հաշուով:

Պրոնգէ մեդալակիրները դարձան Պուկարիան ներկայացնող Հայկ Մնացականեանը եւ հունգարացի Բալինտ Կորպաշին:

63 կգ քաշային կարգի եզրափակչում Ռուսաստանի ներկայացուցիչ Ստեփան Մարեանեանը 4:10 հաշուով պարտուեց ճապոնացի Սինոբու Օտեին եւ բաւարարուեց արծաթէ մետալով:

Կիսաեզրափակչում Մարեանեանը յաղթել էր Հայաստանի ներկայացուցիչ Սլավիկ Գալստեանին, որը դարձաւ պրոնգէ մետալակիր:

ՊՍԺ Երկրպագուները Սպառնում Են Բոյկոտել Նեյմարի Մասնակցութեամբ Խաղը

Ֆրանսական «ՊՍԺ»-ի երկրպագուները դժգոհ են թիմում Նեյմարի ներկայութիւնից եւ սպառնում են բոյկոտել նրա մասնակցութեամբ Ախոյեանների լիգայի հանդիպումը:




Նեյմարը դժգոհ էր ֆրանսական ակումբից եւ մէկ անգամ չէ, որ պահանջել է վաճառել իրեն, սակայն տրանսֆերի ձախողումից յետոյ ֆուտպոլիստը սկսել է քայլեր կատարել ակումբի ղեկավարութեան հետ մտերմանալու հարցում:

Փարիզեան թիմի ղեկավարները հանդիպել են երկրպագուների մի քանի խմբերի հետ, իսկ վերջիններս յայտարարել են, որ խաղի ժամանակ Նեյմարի դէմ ուղղուած պաստառներ են ցուցադրելու:

Յիշեցնենք, որ Նեյմարը «ՊՍԺ»-ի կազմում խաղադաշտ դուբլ կը գայ Սեպտեմբերի 14-ին «Ստրասբուրգի» դէմ խաղում, իսկ Ախոյեանների լիգայի առաջին հանդիպումը Սեպտեմբերի 18-ին է «Ռեալի» դէմ:

«Մանչեսթեր Եունայթեդը» Ու Դէ Խեան Համաձայնութեան Են Եկել

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» եւ Սպանիայի ազգային հաւաքականի դարպասապահ Դաւիդ Դէ Խեան նոր պայմանագրի հարցում վերջնական համաձայնութեան է եկել անգլիական ակումբի ղեկավարութեան հետ, հաղորդում է Sky Sports-ը:



Դէ Խեանի նոր պայմանագիրը «Մանչեսթեր Եունայթեդի» հետ նախատեսուած կը լինի մինչեւ 2023 թուականի Յունիս: Սպանացի դարպասապահը կը ստանայ շաբաթական 350 հազար ֆունտ ստերլինգ աշխատավարձ: 28-ամեայ դարպասապահն այժմ ստանում է շաբաթական 250 հազար ֆունտ ստերլինգ:

Դէ Խեան «Մանչեսթեր Եունայթեդում» հանդէս է գալիս 2011 թուականից:

Արտաշես Թագաւորի Հարսանիքը

Շարունակուած էջ 17-էն

կակիծից, նրա խելահար սիրով տարուած բազում մարդիկ նետուում էին առաջ՝ իրենց «Անուշ» թագաւորի հետ գերեզման իջնելու: Ուրիշ շատեր, ինքնակամ խոցում իրենց սրտերը, «Անուշ» Արտաշես թագաւորի հետ նրա յաւերժութեան ճամբաներով քայլելու: Արքայի թագաժառանգ որդի Արտաւազդէն էր վրդովել, դիմելով հօրը կանչել՝

Մինչ դու գնում ես,
Եւ ամբողջ երկիրը քեզ հետ ես տանում,
Ես աւերակների վրայ ո՞ւմ թագաւորեմ:

Արտաշես թագաւորը անիծում է Արտաւազդին՝

Երբ դու ձի հեծնես, որսի գնաս, Ազատն ի վեր, ի Մասիս, Քաջքերը քեզ բռնեն, տանն՝ Ազատն ի վեր, ի Մասիս, Այնտեղ մնաս եւ լոյս չտեսնես:

Հօր անէծք: Ոչ մի որդի թող չտիրեցնի, չվշտացնի, չանարգի իրեն արեւի հրաշափառ լոյս, երկնի կապոյտի տեսք, կեանքի առասպելական հրաշքի վայելքի հէքիաթ պարգեւող հօրը: Ասում են հօրը անէծքը «բռնում» է, սարսափելի է խորհել ...:

Անցնում էին պատմութիւն դարձած բազում տարիներ, Արտաշեսի որդի Արտաւազդը որսի է ելնում Մասիսի լանջեր: Քաջքերը բռնում են նրան, շղթայում, ապա բանտարկում Մասիսի քարանձաւներից մէկում: Նրա որսի երկու շները կրծում են շղթաները, որ նրան ազատէին կապանքներից: Արտաւազդը թափ է տալիս շղթաները, աշխատում փշրել նրա օղակները,

որ քարանձաւից դուրս գար ու վրէժից կործանէր աշխարհը: Սակայն իգուր, շղթաները դամոււած էին քարանձաւի ժալոխն:

Որսի շները, կրծելով Արտաւազդի շղթաները, մագաչափ-մագաչափ բարակում էին: Իւրաքանչիւր Նաւասարդի տարեմուտին հայոց աշխարհի դարբինները երեք անգամ կրաններով հարուածում գնտանների սալերին, որ ամրանային իրենց Հայկագուն գարմից «Անուշ» Արտաշես թագաւորի՝ ապերասան Արտաւազդ որդու շղթաները: Ես, «Մուսանների լեռ»-ան լանջի շէնի մասն, տեսել ինչպիսի պատկառանքով էր շէնի դարբին «Միքայել-Մէխուլ»-ը, Ուրբաթ իրիկուններին, երեք անգամ իր ծանր կրանը զարկում գնտանին: Յետոյ պիտի իմանայի՝ այդ զարկերի խորհուրդը:

Արեւակահան, Արմէն-հայերի քար է սիրտ, աստուածների գահ՝ Արարատի ճակատը պատուուած է ընդերքի խռովքից, վիհեր են այնտեղ: Ոչ ոք յանդգնել էր այդտեղից բարձրանալ նրա գագաթ, ասում չարքեր են այնտեղ, Արտաւազդ թագաւորը շղթաներով ժալոխն է դամոււած:

Իրենց ցեղի հին աստուածներ լոյսի հրաշքով արբեցած տղաները քանդել են արեւմտեան կողմից իրենց աշխարհը շղթայած փշալարերը, արծուային թուիչքով անցել Երաստ-Երասխի ջրերի վրայով, մտել Արարատի վիհեր, այն-

տեղից ելել նրա բարձունքներ, ճնծաղիկ քաղելու՝ այն ընծայելու համար վահագնի ծննդեան տունին: Վիհում հանդիպել էին ժայռին դամոււած Արմէն-հայերի Արտաւազդ թագաւորին: Արձակել էին նրա շղթաները, թեւանցուկ արած բերել արեւի ու լոյսի աստուած Միհրի տաճար: Գառնի աւանի փլած ամբոցի, Խոսրով կոտակ Արշակունի թագաւորի լայնատարած անտառի թիկունքի բարձր լեռների առաջ կանգնած տաճար, որի քսան չորս սիւները արշալոյսին ժպտում են Միհրի լոյսով: Միհրի տաճար, տիեզերք խորհրդանշող մեհեան, ընդերքի խռովքը փլել էր սիւները, ընկել էր տաճարը: Հայոց երկրի Արմին-Հայ մի իմաստուն ճարտարապետ, ուրուագծել էր տաճարի նախկին տեսքը, Արմին-Հայ քարագործ վարպետները հաւաքել նրա որմերից ընկած վէմերը, կորածների փոխարէն նորերը տաշել, նոյն վեհութեամբ յաղթ կանգնեցրել Ազատ գետի հոսքի նոյն բարձունքին: Արմինահայաստան աշխարհի արեւի ու լոյսի Միհր աստուծոյ միակ կանգուն տաճար-մեհեանն է այն:

Արտաւազդ թագաւորի հետ եկել էին Միհրի տաճար, ցնծում էին հրապարակ հաւաքուած հազար-հազար հայեր, Ազատ գետի ձորն էր արձագանգում նրանց անուշ բերկրանքի կանչերը: Թմբկահարն էր թմբուկ զարկում, ծիրանի փողերն էին հնչում, պարմանների, պարմանուհիների, տարեցների շարքերը կարծէս լոյսի ճառագայթներին յենած, իրենց նախնիների շուրջ պարերն էին բռնել: Նրանց տոփիւններից դողում էր տաճարը, դիմացի Խոսրովի անտառի եղնիկները, այծեամները բացատ դուրս եկել, անշարժ կանգնել, կարծէս ունկնդրում այն ափի նուագարանների հնչիւնները:

Արտաւազդ թագաւորն է բարձրացել մեհեան, քրմուհիներն են հեթանոսական տաղերով դիմաւորել նրան:

«Պատմական Հայկական Վաշտը»

Շարունակուած էջ 16-էն

նիւ ժողովրդին մատնել թուրքերի, թաթարների եւ քրտերի անպատիժ բարբարոսութիւններին»: Հայութեան մասին՝ «Թերեւս ինձ անհրաժեշտ էր հասնել հայոց լեռները, որպէսզի հասկանայի հայի ոչ դիւրին հոգեբանութիւնը՝ մէկ ժայռերի պէս խոժոռ, մէկ պարզամտորէն քնքոյշ, ինչպէս հովուի սրինգը, մէկ կատաղի, ինչպէս լեռնային հեղեղ, մէկ յուսահատութեամբ լեցուն, ինչպէս միջլեռնային անդունդ»: Հայաստանի նոր իշխանութիւնները երբ կը համաձայնին թուրքերու հետ, Զօրավարը կ'ըսէ. «կովկասահայերի դժբախտութիւնն այն է, որ թուրքերի մասին դատում են այնպէս, կարծես լուսնից են ընկել»: Կովմակով Ախալքալաքէն կ'անցնի Լոռի, Դսեղ, հանդիպում Յովհ. Թումանեանի հետ, ապա զաղթականներու հոծ զանգուածին հետ Դիլիջան, Սեւան, Սելիմի լեռնանցք, Սիսիան, Գորիս, Զուլֆա, անվերջ բախումներ, զոհեր՝ հիւանդութիւններէ ինկած, զարհուրելի պատկերներ, որք ու սով ամէնուրեք. բայց միշտ՝ Անդրանիկի կողքին: Արդէն Սիսիանի մէջ «սիպիւրեան վաշտ»-ն մնացած էին

րել նրան: Ատրուշանի մոխիրն է խառնել, ափերով կրակ վերցրել, երկինք նետել, որ Արմինահայաստան աշխարհը աստուածների նուիրաբերած կրակի լոյսով հրավառուէր:

Վահագնի ծնունդ, տաճարի Արմէն քրմապետի առաջնորդութեամբ աստիճաններով իջնում արեգակունք ակներով, կրակ պատմուճանով վահագնը, եղէգնեայ ջահը վեր պարգած Արտաւազդը: Բամբեր են որոտում, ծիրանափողերի անուշ նուագի հետ հազար-հազար Արմէն-հայեր վահագնի ծնունդի երգն են թնդում: Տաճարի աստիճաններին ելած շարան-շարան արեւալոյս քրմուհիները իրենց աստուածներին ձօնուած տաղերը երգում, Արտաւազդը նրանց հնչիւններին եղէգնեայ ջահի կրակալոյսը հոսում, հայոց աստուածները, Արարատի գագաթից բուռ-բուռ ձիւն տեղում: Արմէն քրմապետը նրանց հրապարակ բերում, նրանց շուրջը լայն շրջաններ կազմած Արմէն-հայերը շուրջ պարեր են բռնում, սեղմուել էին շարքերը, վահագնին ու Արտաւազդին գրկել, ձեռքերի վրայ վեր բարձրացրել, որ բարեպաշտութիւն, ցեղի սրտին հողի պաշտամունքի ոգի, կուռի ու յաղթանակի խոյեանք անձրեւէին արմին արեւորդիներին սրտերին, հայոց աշխարհին: Խնդութիւն էր հայոց մայր ոստանում: Հազար-հազար Արմին-հայեր ոստանի փողոցներ ելել, խնդում, ողջոյնում իրար, իրենց «Անուշ» թագաւոր հայկագուն Արտաշեսի որդին եկել թագաւորելու հայոց աշխարհին, շարունակելու հազար-հազար տարիների, արեւորդիների գարմից հայկագուն տոհմերի գահակալութիւնը: Այս գիրը ընթերցող Արմին-Հայ մարդ, հաւատա՛, որ նախնիներիդ գարմից արեւորդի այր է գալու «գահակալելու» քու արարչական երկիրին, քու հին աստուած բարեպաշտութիւն, եւ նորէն բարգաւաճում ու առատութիւն կը լինի հայոց երկրում ...:

Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքեան

Շարունակուած էջ 14-էն

կոպոս Պալաքեան «երբեք չէ այցելած մայր եկեղեցին» մինչեւ երկու տարի երբ արդէն պատահած էր իր վաղաժամ վախճանումը:

Պալաքեան Եպիսկոպոսի Վախճանը

Յիշեալ տիտուր միջադէպը իր աղիտաւոր արձագանգը կը գտնէր երբ բարեբար Խորասանճեան հետեւելով բանասարկուներու բամբասանքին յանցաւոր կը նկատէր Պալաքեան Սրբազան: Սրբազանը միայն երեք տարի եւս կ'ապրէր յուսալքուած եւ յուսախաբ, ու կը վախճանէր 1934 թուի հոկտեմբերին 59 տարեկանին: Իր որոշումին համաձայն վերջն օժման եւ յուղարկաւորութեան կարգը կը կատարուէր Պոմոնի եկեղեցոյ մէջ՝ նախագահութեամբ Փարիզէն յատկապէս եկած Վուսմշապուհ Եպիսկոպոսին եւ ի ներկայութեան բազմահարիւր հայերու եւ պետական անձերու:

«Հայ Գողգոթան» Հատորը

Պալաքեան Սրբազանի սոյն երկհատոր գիրքը ակնատեսի վկայութիւններով գրուած փաստաթուղթ մըն է, ընդարձակ եւ սրտամմիչիկ մանրամասնութիւններով,

րով, լոյս տեսած 1922 թուին, ուր կը կարդանք հայոց կրած անպատմելի աքսորն ու ջարդը որոնց զոհ գացին միլիոնէ աւելի հայեր թրքահայաստանի մէջ: Ցերասպանութեան թիրախը Թուրքիոյ ամբողջ հայութիւնն էր իր կրօնական, ազգային եւ ուսումնական կենսական յայտնի հաստատութիւններով: Հեղինակը ակնատեսն եղած է աքսորեալները կառքերու մէջ, աւանակներու վրայ եւ հետիոտն որոնք կը դիմէին դէպի անագորոյն մահ: Կը գրէ նաեւ վերապրողներէն լսածներն ու անոնց մագապուրծ ազատիլը, օտարներու յետամնաց ակնարկն ու երբեմն քաջ ու ազնիւ մարդոց օգնութիւնը:

Իր մասին գրելով Սրբազանը կը յիշէ թէ փախուստի ճամբաներ կը գտնէր անտառներու եւ լեռներու ճամբով ինքզինք գերմանացի ծպտեալ զինուոր ներկայացնողներով: Գիրքը յետագային անվերջնի թարգմանուեցաւ իր եղբօր թոռան Փրոֆ. Բիթըր Պալաքեանի կողմէ որմէ ետք երկու անգլերէն գիրքեր եւս գրեց իր վերապրող հարազատներէն վկայութիւններ քաղելով: Գրիգորիս Եպս. Պալաքեան կը հանդիսանայ մեր մօտաւոր անցեալի արմաշական սերունդի ամենէն ընտիր նուիրեալ, ուսեալ եւ վարչազէտ ներկայացուցիչներէն մին:

28 ռազմիկ, միւսները նահատակուած տարբեր մարտերու ընթացքին. բայց ոչ ոք կը լքէ վաշտը՝ Երեւան երթալու: Դիպուկ մտորում մը՝ «Ես եկայ այն եզրակացութեան, որ սա ապշեցուցիչ հերոսականութեան ժողովուրդ է, բայց կարօտ արժանաւոր ղեկավարների, որոնց կարողանայ վստահել»:

«Վերջաբան»-ին մէջ կը կարգանք, որ ի վերջոյ վաշտէն կը մնայ երկու հոգի եւ ինչ անսպասելի փաստ «Եւ գարմանալի բան, իմ երկու հայ ընկերները գնացին իմ Սիպիւրը, իսկ ես՝ սիպիւրցիս, մնացի հայերի մէջ»...:

Գիրքի աւարտին կան նիւթին հետ առնչուած երկու փոքր յօդուածներ եւ քերթուած մը վաշտի անդամ, ռուս բանաստեղծ Պ. Սիպիւրցեւը գրիչով («Հայաստանին»), որ կ'աւարտի այսպէս.

Քո դաշտերի ծխի միջից ու ցուքերում հեղուած արեան

Նշմարուում է վերջը արդէն սահմուկեղի հրդեհի...

Հայոց երկիր, երկիր վշտի՛, տուկուճութեան,

Սօ՛ւտ է ժամդ, ժամդ՝ կեանաց ու աղօթքի:

Յուշագրութիւնը թանկագին մասունք մըն է մեծն Զօրավարը առաւել բացայայտող:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՅՈՎՍԷՓ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ վաղաժամ մահուան առթիւ Մութաֆեան եւ Արապաճեան ընտանիքներ իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, ծաղկեպսակներով ու փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով:

www.massispost.com

PUBLIC MEETING WITH PRIME MINISTER OF ARMENIA
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ



SUNDAY SEPTEMBER 22, 2019 AT 2:00 PM
ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 22, 2019 AT 2:00 PM

ԳՐԱՆԴ ՓԱՐՔ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻԾ

GRAND PARK AT

LOS ANGELES CITY HALL

200 N. SPRING STREET LOS ANGELES, CA 90012

CO-ORGANIZED BY

**CONSULATE GENERAL OF ARMENIA
AD-HOC COMMITTEE OF ARMENIAN ORGANIZATIONS
MAYOR ERIC GARCETTI
COUNCILMEMBER PAUL KREKORIAN
LA COUNTY SUPERVISORS KATHRYN BARGER & HILDA L. SOLIS**

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԷՐԻԿ ԳԱՐՍԵԹԻ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՓՈՂ ԿՐԵԿՈՐՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՔԵԹՐԻՆ ԲԱՐԳԵՐ և ՀԻԼԴԱ ՍՈԼԻՍ